Թեստ

1. Վեց հազար հինգ հարյուր չորս թվի գրության մեջ ո՞ր կարգում է գրված 0:
   1) միավորների 2) տասնավորների 3)հարյուրավորների
   4) հազարավորների 5) ոչ մի կարգում:
2. Նշիր ամենափոքր եռանիշ թիվը, որի գրության մեջ կրկնվող թվանշաններ չկան
   1) 100 2) 101 3) 123 4) 102 5) 110
3. Նվազելին մեծացրել են 10-ով, իսկ հանելին թողել են նույնը: Արդյունքում տարբերությունը
   1) կմեծանա 10-ով 2) կփոքրանա 10-ով 3) կմեծանա 10-ով
   4) կփոքրանա 10-ով 5) կմնա նույնը:
4. Մայրիկը գնեց 20 մանդարին: Կարինեն կերավ դրանց կեսը, Լուսինեն կերավ երկու մանդարին, իսկ Մարիամը՝ մնացածը: Քանի՞ մանդարին կերավ Մարիամը:
   1) 4 2) 6 3) 8 4) 10 4) 12:
5. Նշեք այն տողը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով
   1) 8356, 20001, 8999, 5790
   2) 4567, 4570, 5678, 999
   3) 4378, 4387, 4389, 4379
   4) 9830, 9849, 9856, 9870
   5) 10008, 6789, 1106, 587:
6. 75-թվի $\frac{3}{5}$ մասը կլինի
   1) 51 2) 125 3) 13 4) 45 5) 35:
7. $\frac{5}{6}$ ժամը րոպեներով արտահայտած կլինի
   1) 35 2) 45 3) 72 4) 65 5) 50:
8. 8տ 4ց 60 կգ-ը կիլոգրամներով արտահայտած կլինի
   1) 8460 2) 84 3) 8406 4) 8046
9. Ուղղանկյան կողմերից մեկը 14սմ է, մյուսը՝ 20 սմ: Գտիր այդ ուղղանկյան պարագիծը:
   1)40 սմ 2) 280 սմ 3) 34 սմ 4) 68 սմ
10. Գծագրում ներկված չէ  պատկերի
    1) $\frac{5}{9}$ մասը 2) $\frac{4}{9}$ մասը
    3) $\frac{4}{5}$ մասը 4) $\frac{4}{10}$ մասը 5) $\frac{4}{12}$ մասը:

11. Դասը սկսվեց 12: 55 և տևեց 45 րոպե: Ե՞րբ ավարտվեց դասը:

12. Թվային հաջորդականությունը կազմված է հետևյալ կանոնով. առաջին անդամը 1 է, երկրորդ անդամից սկսած յուրաքանչյուր անդամը հավասար է իր նախորդի և 2 թվի գումարի կրկնապատիկին: Գրիր այդ հաջորդականության չորրորդ անդամը:
13. 420-ին գումարիր 15 և 8 թվերի արտադրյալը:
14. Մեկ պատուհանը ներկելու համար պետք է 400 գ ներկ: 8 կգ ներկով քանի՞ պատուհան կներկեն:
15. Երկնիշ թվի թվանշանների գումարը 15 է: Այս պայմանին բավարարող քանի՞ երկնիշ թիվ կա:
16. Ուղղանկյան մի կողմի երկարությունը 16սմ է, իսկ մյուս կողմինը՝ 14: Գտիր այն քառակուսու կողմի երկարությունը, որի պարագիծը հավասար է այդ ուղղանկյան պարագծին:
17. Համակարգչային խաղի առաջին մակարդակը անցնելու համար Արմենին պետք է եղավ 5 րոպե 25 վայրկյան: Երկրորդ մակարդակը անցնելու համար 35 վայրկյան ավելի ծախսեց: Արմենին որքա՞ն ժամանակ պետք եղավ երրորդ մակարդակ հասնելու համար: